ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿԻ միջև

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա)՝ ի դեմս ռեկտոր Արսեն Լոքյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս Համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանի, որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), անհրաժեշտ համարելով ՀՀ բուհերի միջև համագործակցության զարգացման կարևորությունը, կնքեցին սույն պայմանագիրը համագործակցության մասին:

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1 Համագործակցության նպատակը կրթության և գիտության ոլորտում համատեղ փոխշահավետ ծրագրերի մշակումն ու իրականացումն է:

1.2 Կողմերը կզարգացնեն երկխոսությունն ու համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում: Այդ համագործակցությունը կիրականացվի՝ օգտագործելով հետևյալ միջոցները և մեթոդները.

1.2.1 համատեղ միջոցառումների կազմակերպում. երկու Կողմերի պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմի մասնակցությամբ խորհրդակցություններ, հանդիպումներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ.

1.2.2 ուսումնական ծրագրերի համատեղ մշակում և դրանց իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրում՝ ընդգրկելով երկու ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագետներին.

1.2.3 փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում մասնագետների փորձի փոխանակում:

1.3 Կողմերի համագործակցության հիմքում փոխըմբռնման, հրապարակայնության, փոխադարձ վստահության, ներդաշնակության, արդյունքների կառավարման և փոխադարձ պատասխանատվության սկզբունքներն են:

2.

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

2.1 Արդյունավետ համագործակցություն հաստատելու նպատակով Կողմերը՝

2.1.1 կկազմակերպեն պատվիրակությունների այցելություններ՝ նախապես ճշտելով և ամրագրելով այցելության նպատակը, ժամկետը, տևողությունը, ծախսերը,

2.1.2. կիրականացնեն ուսումնական պլանների և ծրագրերի, ինչպես նաև ուսումնական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների կիրառման փորձի փոխանակում,

2.1.3 կկազմակերպեն ուսանողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ, վարպետության դասեր, կլոր սեղաններ, թեմատիկ բանավեճեր,

2.1.4 կտրամադրեն տեղեկություններ գործող կրթական ծրագրերի և միջազգային համագործակցության հնարավորությունների մասին,

2.1.5 կմշակեն համատեղ կրթական ծրագրեր և/կամ առանձին դասընթացներ՝ ուսանողներին հնարավորություն տալով կրթություն ստանալու նաև հեռավար ուսուցման միջոցով,

2.1.6 կապահովեն ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունությունը՝ նախապես ամրագրելով փոխանակման պայմանները, ֆինանսավորումը,

2.1.7 հնարավորություն կընձեռեն գիտական ամսագրերում գիտական հետազոտությունների արդյունքները տպագրելու համար,

2.1.8 կմասնակցեն համատեղ հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների իրականացմանը, դրանց արդյունքների հրատարակմանը, գիտական և ուսումնամեթոդական հրատարակումների փոխանակմանը,

2.1.9 կտրամադրեն միմյանց մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրներ և կմշակեն գրադարանային ռեսուրսների փոխշահավետ օգտագործման արդյունավետ եղանակներ,

2.1.10 համատեղ կկազմակերպեն հանրապետական և միջազգային գիտաժողովներ,

2.1.11 համատեղ կիրականացնեն գիտական դրամաշնորհային ծրագրեր,

2.1.12 կմասնակցեն կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, միջոցառումներին:

2.2 Առանձին դեպքերում վերոնշյալ գործողությունների պայմաններն ու ձևերը կսահմանվեն յուրաքանչյուր առանձին դեպքի համար նախատեսված համաձայնագրերով:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում հինգ տարի ժամկետով:

3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

3.3 Սույն պայմանագիրը լուծվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երեք ամիս առաջ:

3.4 Սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունների կարգավորման առումով Կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ:

3.5 Սույն պայմանագիրը կազմված է իրավաբանական հավասար ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա	«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8	Հասցե՝ ՀՀ, ք. Գորիս, Ավանգարդ 4
Հեռ. (+374 10) 26 92 59	Հեռ. (+374 0284-2-27-67
էլ. հասցե՝ aspa.paara@gmail.com	էլ. Հասցե՝ www.gorsu.am
Ռեկտոր _____ Ա. Լոքյան	Ռեկտոր _____ Ա. Ղուկասյան
Կ.Տ.	Կ.Տ.